



Վ Ճ Ի Ռ

Հանուն Հայաստանի Հանրապետության

05 ապրիլի 2013թ.

ք. Գյումրի

վարչական գործ թիվ ՎԴ5/0515/05/12

Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանը
նախագահությամբ՝

Դատավոր
Քարտուղարությամբ՝

Էդվարդ Նահապետյանի
Սարիցա Ասատրյանի

Մասնակցությամբ՝

հայցվոր

Քնարիկ Հարությունյան
Անձնագիր AC 0625476, տրված
21.10.1999 թվականին, 021-ի կողմից

պատասխանող՝

Շիրակի մարզպետարան
Ներկայացուցիչներ՝ Գ.Բաղդասարյան
Ա.Հախվերդյան

դուրսաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի Քնարիկ Հարությունյանի ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ պաշտոնատար անձի գործողությունը վիճարկելու՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում ընդգրկելու պահանջի մասին

Պ Ա Ր Չ Ե Յ


Գործի դատավարական նախապատմությունը.

Քնարիկ Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան՝ պաշտոնատար անձի գործողությունը վիճարկելու՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում ընդգրկելու պահանջի մասին, որը դատավոր Էդվարդ Նահապետյանի որոշմամբ 03.12.2012 թվականին ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ: 31.01.2013 թվականին նշանակված նախնական դատական նիստի ընթացքում դատարանը որոշում է կայացրել դատաքննության անցնելու մասին:

Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Իր պահանջի հիմքում ընկած հանգամանքները դատարանին է ներկայացրել հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվոր Քնարիկ Առաքելի Հարությունյանը ծնված 01.01.1935 թվականին փաստացի բնակվող Շիրակի մարզի գյուղ Ողջի հասցեյում, 1988 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով 2008 թվականի դեկտեմբերի 10-ի բնակարանային պայմանների ստուգման ակտի համաձայն ձեռք է բերել բնակարանային պայմանների բարելավման իրավունք: 27.08.2008 թվականին դիմել է ՀՀ Շիրակի մարզի Ողջի համայնքի դեկավարին, որ ՀՀ Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 10-ի N 1837 որոշման համաձայն՝ իրեն հաշվառի աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների



ցուցակում: 2008 թվականի դեկտեմբերի 16-ին ստացել է դրական պատասխան: Այնուհետև 02.11.2012 թվականին դիմել է ՀՀ Քաղաքաշինության Նախարարություն, որտեղ իրեն պատասխանել են, որ համայնքային ղեկավարի որոշումը բավարար չէ, պարտադիր է մարզային ղեկավարի որոշում: Դիմել է նաև Շիրակի մարզպետարան, որտեղ 1-03/5809 որոշման համաձայն մերժվել է հաշվառումից, հիմք ընդունելով այն փաստը, որ 19.09.2003 թվականին իր անվամբ օտարվել է առանձնատուն Շիրակի մարզի Ողջի գյուղում: Գտնում է, որ Շիրակի մարզպետարանի 1-03/5809 որոշումն անհիմն է, քանի որ ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ին կայացրած 13 N 1337 որոշման 10.3 ենթակետի համաձայն՝ մերժվում են այն քաղաքացիների դիմումները, ովքեր 2004 թվականի հունվարի 1-ից հետո են օտարել բնակարան կամ բնակելի տուն, որի հետևանքով արհեստականորեն վատթարացրել են իրենց բնակարանային պայմանները: Մինչ դեռ ինքը իր տունը օտարել է ոչ թե 2004 թվականի հունվարի 1-ից հետո այլ առաջ 19.09.2003 թվականին, ուստի ՀՀ կառավարության որոշման վերը նշված սահմանափակումը իր վրա չի տարածվում:


Հայցվորը խնդրել է դատարանին պարտավորեցնել Շիրակի մարզպետարանին վերցնել հաշվառման երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում և սահմանված կարգով ուղարկել ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակապահովման հանձնաժողովին լուծելու իր բնակարանային բարելավման հարցը:

Պատասխանողի իրավական դիրքորոշումը.

Պատասխանող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանը հայցադիմումին գրավոր պատասխան է ներկայացրել և հայտնել, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Քնարիկ Հարությունյանը ՀՀ վարչական դատարան հայցադիմում է ներկայացրել՝ պաշտոնատար անձի գործողությունը վիճարկելու՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում ընդգրկելու պահանջի մասին խնդրելով դատարանից պարտավորեցնելու Շիրակի մարզպետարանին վերցնել հաշվառման երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում և սահմանված կարգով ուղարկել ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակապահովման հանձնաժողովին լուծելու իր բնակարանային բարելավման հարցը: Գտնում են, որ հայցն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ հաստատվել է «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը» /այսուհետ՝ Կարգ/, որով կարգավորվում են աղետի գոտու գյուղական բնակավայրերում պետական աջակցության միջոցով իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառումն, նրանց հաշվառումից հանելու և բնակարանային ապահովության առաջնահերթության որոշման հարաբերությունները: Համաձայն Կարգի 4-րդ և 5-րդ կետերի՝ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների հաշվառումն իրականացնում է նրանց մշտական բնակության վայրի համայնքի ղեկավարը, հաշվառվելու նպատակով քաղաքացիները դիմումները ներկայացնում են ըստ բնակության վայրի՝ համայնքի ղեկավարին: Կարգի 8-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին հաշվառումից հանում է համապատասխան համայնքի ղեկավարը՝ Կարգի 17-րդ կետի ենթակետերից որևէ մեկի առկայության դեպքում: Համաձայն ՀՀ Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման 2-րդ




կետի 1-ին ենթակետի աղետի գոտու գյուղական բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տները հատկացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարը: Հայցվորը դատարանից խնդրել է պարտավորեցնել ՀՀ Շիրակի մարզպետարանին իրեն վերցնելու հաշվառման երկրաչափի հետևանքով անօթևան մնացած բնտանիքների ցուցակում և սահմանված կարգով ուղարկել ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակապահովման հանձնաժողովին լուծելու իր բնակարանային բարելավման հարցը: ՀՀ օրենսդրությամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին երկրաչափի հետևանքով անօթևան մնացած բնտանիքների ցուցակում ընդգրկելու լիազորություն տրված չէ: Կարգի 4-րդ կետով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներին հաշվառելու լիազորություն տրված է համայնքի ղեկավարին: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված է, որ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել: Նույն օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորեցման հայցը դատարան կարող է ներկայացվել՝ ա. մեկամսյա ժամկետում այն պահից, երբ մերժվել է տվյալ վարչական ակտի ընդունումը, բ. երկամսյա ժամկետում այն պահից, երբ լրացել է վարչական ակտ ընդունելու համար սահմանված առավելագույն ժամկետը: Սույն գործով հայցվորը դատարան է դիմել շուրջ 4 տարի անց, այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Խնդրել է դատարանին Քնարիկ Հարությունյանի հայցն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ պաշտոնատար անձի գործողությունը վիճարկելու՝ երկրաչափի հետևանքով անօթևան մնացած բնտանիքների ցուցակում ընդգրկելու պահանջի մասին, մերժել:

Սույն վեճի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Լսելով հայցվորին, պատասխանողի ներկայացուցիչներին, հետազոտելով գործում առկա գրավոր ապացույցները, և դրանցից յուրաքանչյուրը գնահատելով բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնների կամ



դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝ ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն,

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, սահմանում են անձի դատարան դիմելու հատկապես կարևորագույն իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար, որը վերաբերում է նաև պետական մարմինների կողմից իրականացվող վարչարարության արդյունքում ընդունված վարչական ակտերին, գործողություններին (անգործությամբ) դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը: Այս դեպքում պետական մարմինը կայացնում է վարչական ակտ, կատարում է գործողություն կամ թույլ է տալիս անգործություն, որի գոյությունը անձի համար ստեղծում է պայմաններ՝ ողջամտորեն համարելու, որ պետական մարմնի որոշակի վարչական ակտով խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Վերոգրյալից հետևում է, որ դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգման ապահովմանը: Այսինքն՝ անձը, դիմելով վարչական դատարան, ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական մարմինների վարչական ակտերը, գործողությունները (անգործությունը) ընդունվել կամ կատարվել են օրենքի խախտմամբ, այլև պետք է մատնանշի իր այն իրավունքները, որոնք դրա արդյունքում խախտվել են: Այստեղից էլ հետևում է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վիճարկվող վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում;

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները:

Սույն գործի փաստերի համաձայն հայցվոր Քնարիկ Հարությունյանը ՀՀ վարչական դատարան հայցադիմում է ներկայացրել՝ պաշտոնատար անձի գործողությունը վիճարկելու՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում ընդգրկելու պահանջի մասին՝ խնդրելով դատարանից պարտավորեցնելու Շիրակի մարզպետարանին վերցնել հաշվառման երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում և սահմանված կարգով ուղարկել անօթևանության նախարարության բնակապահովման հանձնաժողովին լուծելու իր պարտավորության բարելավման հարցը: ՀՀ Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1837-Ն




որոշմամբ հաստատվել է „Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը” /այսուհետ՝ Կարգ/, որով կարգավորվում են աղետի գոտու գյուղական բնակավայրերում պետական աջակցության միջոցով իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և բնակարանային ապահովության առաջնահերթության որոշման հարաբերությունները: Համաձայն Կարգի 4-րդ և 5-րդ կետերի՝ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների հաշվառումն իրականացնում է նրանց մշտական բնակության վայրի համայնքի ղեկավարը, հաշվառվելու նպատակով քաղաքացիները դիմումները ներկայացնում են ըստ բնակության վայրի համայնքի ղեկավարին: Կարգի 18-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին հաշվառումից հանում է համապատասխան համայնքի ղեկավարը՝ Կարգի 17-րդ կետի ենթակետերից որևէ մեկի առկայության դեպքում: Համաձայն ՀՀ Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ աղետի գոտու գյուղական բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տները հատկացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարը: Հայցվորը դատարանից խնդրել է պարտավորեցնել ՀՀ Շիրակի մարզպետարանին իրեն վերցնելու հաշվառման երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում և սահմանված կարգով ուղարկել ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակապահովման հանձնաժողովին լուծելու իր բնակարանային բարելավման հարցը: ՀՀ օրենսդրությամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում ընդգրկելու լիազորություն տրված չէ: Կարգի 4-րդ կետով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներին հաշվառելու լիազորություն տրված է համայնքի ղեկավարին: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված է, որ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել: Դատաբնության ընթացքում տրված բացատրությունները հայցվորի ներկայացուցիչները հայտնեցին, որ սույն գործի նախնական դատական նիստից հետո Հի Շիրակի մարզի Ողջի համայնքից Շիրակի մարզպետարանը ստացել է հայցվորի բնակարանային գորշը եվ գորշող կարգին համապատասխան ուղղարկել է ՀՀ Քաղաքաշինության նախարարություն հետագա ընթացքը լուծելու համար:

Այսպիսով վերը շարադրված իրավական հիմքերով էլ դատարանը գտնում է որ հայցը ենթակա է մերժման:

Քննարկելով դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցը՝ ՀՀ վարչական դատարանը եզրակացրեց այն պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով՝ ՀՀ վարչական դատարանը.



Քնարիկ Հարությունյանի հայցն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ պաշտոնատար անձի գործողությունը վիճարկելու՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում ընդգրկելու պահանջի մասին մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանին:


Վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադրանքով կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ



Է. Դ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ:



2013 թվականին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ

Է. Դ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ